

տոս ի ձեզ է: ապա մարմին մեռեալ է վասն մեղաց: և հոգին կենդանի է վասն արդարութեան: Զրիստոսէի համար մի տնհասանելի գաղափար չէ ուրեմն այնպիսի կեանքով ապրելը ուր միայն հոգին է դործում: ստիպում մարմինն մեռցնել իւր ցանկութիւնները և իրեն համակերպիլ: այդ նորա կոչումն է: քանի մենք կշարունակենք դեռ մարմնով ապրել: մարմնի հաճոյքները կատարել և նոցա մէջ բաւականութիւն ու երջանկութիւն որոնել՝ մեղքի և մահու օրէնքը կտիրէ մեր վերայ և գերի կպահէ մեզ կամենանք ճանաչել նորա իշխանութիւնը թէ ոչ: Նիւթապաշտական հայեացքների հետ պիտոյր կոհակներով մեղքի հոսանքը ողորդում է մեր աշխարհը և պայթում: զղուելի ուռոյցքների միջից ցոյց է տալիս իւր բոլոր թգեղութիւնը: մի հովասուն զեփուռ: մի երկնային շունչ միայն նորա կատաղութիւնը նստեցնել և նորա բացած վերքերը բուժել կարող է: Որպէս զի մարմինը իւր գործը միայն կատարէ և իւր համար դրած սահմանից չենէ: հարկաւոր է որ հոգին մեր մէջ դերիշխանութիւն ստանայ: որ մենք հոգեւոր, գաղափարական միջոցորտի մէջ վերսկսինք ապրել: հոգեով ապրել: Զրիստոսի հոգեով ուշադիր Առաքեալի ազդարար ձայնին և թախանձադին հրաւիրանաց. «Այսուհետեւ եղբարք, պարտիմք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ»:

Կ. Վ.



ՀԱՅԵՇՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

ՆՈՐԱ ՆԵՐԿԱՅ ՎԵՃԱԿԸ.

(Եարունակութիւն).

Հարեշական եկեղեցին, ինչպէս արդէն ասուեցաւ, ազգային եկեղեցի է: Բացի Հարեշ հրեաներից կամ ֆալանշներից, բացի արեւելեան սահմաններէ վերայ ապրող մահմեդականներից և Գալլայի (հարաւային կողմում) հեթանոս մնացած մասից, բոլոր Հարեշները քրիստոնեայ են: Որքան է Հարեշ քրիստոնեաների թիւը՝ դժուար է ասել: Թա-

ճախ յիշուում է, որ Հարեշտանը 3—4 միլիոն բնակիչ ունի: Բայց 14 տարի առաջ այսպէս էր գրում Ռօլֆս. «Երբ ես յետոյ հոգեով տեղափոխուում էի Հարեշտան և մտածում էի, թէ ինչպէս օր օրի վերայ, ընդարձակ տարածութիւններ անցնելով, ոչ գիւղ և ոչ մարգիկ էի տեսնում»՝ դալիս էի այն համոզման, թէ Հարեշտանը չունի այնքան մեծ թուով բնակիչներ, որքան վերագրում են նորան: Այն էլ շատ է ըստ իս, եթէ նոցա ընդհանուր գումարը 1,500,000 հոգի հաշուենք: Գուցէ առաջ նա բազմաթիւ բնակչութիւն է ունեցել և հաւանականորաբ դեռևս կունենայ. Հարեշները, ինչպէս երևում է, աճող ժողովուրդ են: 5—6 երեսայ ունեցող ամուսիններ բաւական շատ կան...: Ինքնասպանութիւնները խիստ հազուադէպ են այստեղ և կլիման բոլորովին առողջարար է: որովհետեւ անառողջ խոր ընկած հովիտները գրեթէ անբնակ են: Երկրի հարստութիւնը բնակիչների մեծ թիւ կարող է կերակրել: Բայց կան զանազան հանգամանքներ, որոնք բացատրում են Հարեշտանի այսպիսի անօր բնակչութիւնը: Երկրի մէջ գոյութիւն ունեցող յարատե պատերազմը խլում է այս երկրից բազմաթիւ մարդկանց իրենց կեանքի ծաղիկ հասուկում: Թէպէտ բոլոր զինուորները ամուսնացած են, բայց երեսաների, մասը բնական մահով չէ մեռնում...: Թաճախ նաև վարակիչ հիւանդութիւնները ամբողջ գիւղեր և նահանգներ ամայի են դարձնում»:

Հարեշական եկեղեցու ազգային եկեղեցական բնաւորութեան հակասողն է առանձնապէս այն հանգամանքը, որ աբու Նան միշտ Ապոս պետք է լինի, որի թոյլտուութեան համար առաջ (այժմ ինչպէս է՝ չգիտեմ) եզիպտական փոխաբքաներին իւրաքանչիւր նոր ընտրութեան ժամանակ բաւական մեծաքանակ հարկ պետք է վճարուէր: Այս օտար տարրի ազդեցութիւնը չէզոքանում է ոչ միայն նրանով, որ արունան Հարեշտանում միայն Հարեշների մէջ ապրելով, սովորաբար շուտով Հարեշ է դառնում: այլ աւելի նրանով, որ այս ազգային եկեղեցու մէջ թագաւորը նաև եկեղեցու վերայ ունի շատ զօրեղ ազդեցութիւն: Միջին դարերում Զարա Թակոր թագաւորը ձեռնարկեց ինքնազուխ եկեղեցական կարգերի մի նոր բարեփոխութեան. իսկ իւր՝ Անգլիացւոց հետ ունեցած պատերազմներով (1868) յայտնի Թեոդորոս թագաւորը, որ ինքնասպանութիւն գործեց իւր Մարգալա բերդում (1868 ապր. 13), մինչ պաշարող Անգլիացիք նեղում էին՝ աչքի ընկնող կերպով ցոյց է տուել իւր զօրութիւնը արունայի դէմ: Արունան հրապարակական ժողովի առաջ նորան նշովելով իշխանադուրկ յայտարարեց. այն ժամանակ

Նեգոսը առաջ գնաց դէպի նա և խնդրեց՝ ատրու-
ճանակը ուղղելով։ Սիրելի հայր, տուր ինձ քո
օրհնութիւնը»։ և խնդիրն իսկոյն կատարուեցաւ։

Արուսեան, որ այժմ Կոնդորումն է նստում,
հարեշական եկեղեցու միակ եպիսկոպոսն է։ Բ.
աստիճանն է «աւագերեցութիւնը» (կօծօգատ, եղ-
կօմօս), որից յետոյ գալիս են ուրիշ 4 աստիճան-
ներ. երէց, կիսերէց, սարկաւագ, կիսասարկաւագ,
Հոգեւորականների մէջ իսկապէս արուսայի հետ գրե-
թէ հաւասար յարգանք վայելում է կրօնականների
առաջնորդ կամ արքայ հայր էչեզէն, որ ձեռ-
նադրութեամբ աւագերէց է։ Այս էչեզէն ամուս-
տեղին Շօայի Դարա—Լիւանոս Վանքն է։ սակայն
այնտեղ ամուսնակալը պարտաւորեցուցիչ չէ։ Ռօլֆս
1881-ին ժամանակակից էչեզէնի նեգոսի մօտ
պատահեց և գտաւ նրան խիստ բարձր զարգաց-
ման տէր մի մարդ։ աւելի՛ զարգացած, քան մի բար-
ձր հարեշ հոգեւորականից սպասել կարելի էր։
Բացի էչեզէից պատուով արուսային մօտ է նաև
Աքսուսի ներքատը (ըստ Ռօլֆսի ներքէիտ),
Բայց այդ ներքէիտը, եթէ չեմ սխալուում, ձեռնա-
դրուած հոգեւորական չէ։ նորա, ինչպէս և ուրիշ
մեծ եկեղեցիների մէջ համապատասխան «ալակայի»
գիրքը, ընդհանր է հարեշական եկեղեցու ազգային
եկեղեցական ընտրութեան համար։ Հարեշատա-
նում հոգի մեծ մասը եկեղեցական կալուածք է։
Այս կալուածների վերակացութեան համար իւրա-
քանչիւր մեծ եկեղեցում մի քանի զրազէտ և օ-
րէնսգէտ մարդիկ են նշանակուած գեւպտէրատ
կոչումով, որոնք թէպէտ աշխարհական, բայց այ-
նուամենայնիւ եկեղեցեցութեան մասնակցե-
լուն համար հոգեւորական են համարուում թէ
ժողովուրդից և թէ ծանապարհորդներից, եկե-
ղեցական վարչութեան այս աշխարհական մասի
կառավարութիւնը մեծ եկեղեցիներում ալակայի
(այսինքն գլխաւոր) ձեռքն է, որ սովորաբար աշ-
խարհական է լինում։ Բողոքովին նոյն պաշտօնն ու-
նի ներքատը, նա հին եթովպիական գրականու-
թեան մէջ հանդէս է գալիս իբր բարձրագոյն վար-
չական պաշտօնից մի մեծ եկեղեցու կամ վանքի
նրբ այժմ ներքատ և երբ ալակա տիտղոսն են
գործածում, ևս չցիտեմ։ Բացի Ռօլֆսից ուրիշներն
էլ վկայել են Աքսուսի հնադարեան մայր տաճարի
կառավարչի շնորհեմ տիտղոսը կրելուն։ Կարող
է պատահել, որ մի մեծ եկեղեցու ալական և կամ
Աքսուսի ներքէիտը միևնոյն ժամանակ աւագերէց
լինի, բայց այդ սովորական չէ և ոչ էլ օրէնք։
Կրօնականները, ինչպէս երևում է, սովորական եկե-
ղեցիներում չեն սպասաւորում։ Բայց նորա գէթ
մասամբ, ինչպէս ղապիների մէջ և ուրիշ տեղեր

սովորութիւն է։ հոգեւորական աստիճան ունին
Վանքերում, որոնք շատ բազմամարդ են։ միայն
ձեռնադրուած կրօնաւորներն են պաշտօն կատարում։
Ռօլֆսի հաշուով, որ 1881-ին այցելել է Բիզէնի վան-
քը հիւսիսային Հարեշատանում՝ նրա և յարակից
վանքերի մէջ պէտք է որ 1000 կրօնաւոր եղած լի-
նի։ Բայց այդ արեղանների գործունէութիւնը վան-
քերով միայն չէ սահմանափակուում։ նորա վանքերից
գուրս ևս կարող են խոստովանեցնել և ապաշխա-
րութիւն գնել։

Պրքան է հոգեւորականների թիւը։ դժուար է
ասել։ Հօգլին, որ 1861—1862 թ.-ին այցելեց
Հարեշատան՝ 12000 է հաշուել նոցա թիւը և գաս-
գատուում է ձրիակների այս բազմութեան դէմ
որոնք անգործ են և ապրում են աշխատող դասի
հաշուով։ Սակայն ինչպէս որ այս գանգատը հաւա-
նականաբար անարդար, այնպէս էլ նորա հաղորդած
տեղեկութիւնն անձիշդ է։ Անարդար է յատկապէս
կղերականներին անգործութեան համար մեղադրելը։
Պարապութիւնը Հարեշատանում իսկապէս պատուա-
ւոր դասի գլխաւոր պարապմունքն է։ Բարձրաս-
տիճան հոգեւորականները իրենց պաշտօնի հետ կա-
պուած պարտականութեանց և պահանջների շնորհիւ
աւելի շատ գործ ունին, քան մնացած պատուաւոր
հարեշները, իսկ ստորին կարգի կղերականութիւնը
ինչպէս ուրիշ արեւելեան եկեղեցիներում՝ եթէ կր-
թութիւնը ներում է, միայն նուրբ աշխատանքներով
չէ զրադուած, այլ և հասարակ և բարձր արուեստ-
ներով։ Դորա հակառակ Հօգլինի նշանակած թիւը
շատ փոքր է։ եթէ ստոյգ է, որ իսկապէս իւրաքան-
չիւր եկեղեցում 20 հոգեւորականներ և կամ հոգեւ-
րականութեան հետ կապ ունեցող համանման պաշ-
տօնեաներ են կարգուած, որ Կոնդորը իւր 4000 հո-
գի բնակիչներով և 40 եկեղեցիներով (!) մի քա-
նի հարեւա հոգեւորականներ ունի, դեռ չհաշուած
կրօնաւորների բազմութիւնը՝ այն ժամանակ իրաւ-
ցի պէտք է համարել, եթէ Ռօլֆս Հօգլինի
տուած թիւը չշատ աննշան է համարում։

Որ ոչ հոգեւորականների թիւը և ոչ եկեղեցա-
կան կալուածները և պետական աւանձնաշնորհում-
ներն են պատճառ մի եկեղեցու ժողովուրդի վերայ
ազդելուն։ այդ յայտնի երևում է Հարեշատա-
նում։ Ինչիցն է, որ ընայած եկեղեցու այս ազ-
դեցիկ գիրքին, հարեշների ժողովրդական կեան-
քում քրիստոնէութիւնն այդքան ստոր աստիճանի
վերայ է կանգնած։ Անշուշտ դրա պատճառն այն է,
որ այս քրիստոնէութեան մէջ, ինչպէս արդէն Բ.
յօդուածում ցոյց տրուեցաւ, քրիստոնէութեան
կենսական ոյժերը զարբեր է վեր կաշկանդուած են
մնացել։ Իսկ ամենամօտաւոր պատճառը, որ ի հարկ

է առաջին հետեանք է հոգեորականութեան տգիտութիւնն է— Ուշիս պատմում է որ մի հարեշ հոգեորական Մարիա Թերեզիայի Յ տ ա լ ե ռ էր գտել և լուրջ աղօթելուց յետոյ ոչ թէ սեպհականել է այլ առաջարկել է նրան, ենթադրելով թէ նա է տէրը, «նա անխօս մնացի—գրում է նա— Բահաններինց մէկն էր դա ուրեմն մի տգէտ ֆանատիկոս աւելի յիմար քան իրենք սովորական հարեշները, ինչպէս շատ ծանազարհորդութիւնների մէջ յիշուում է, օժտուած բոլոր հնարաւոր ակտերով, ընդունակ ամեն տեսակ ոճրագործութեան, ինչպէս կարող էր նա այնպէս պարզ կերպով բարի բան անել, ճիշդ է՝ մեզ մօտ բոլորովին զարմանալի չէ, երբ մէկը գտած մի իր վերագարծում է, բայց այստեղ, երբ խօսքն այդքան խիստ նախատիքների արժանացած հարեշ հոգեորականութեան մի անգամի մասին է՝ ո՞վ կարող էր այդ մտածել, 10 ծանապարհորդութիւններից հազիւ թէ մէկը գտնուի որ հարեշ հոգեորականներին ամենաշնչին լաւութիւն վերագրէ. թող ուրեմն շատ չչափազանցենք»:

Եւ այդ պատճառով չեմ ուզում աւելի երկար տեղեկութիւններ տալ հարեշական հոգեորականութեան բարոյական վիճակի մասին։ Ինչ վերաբերում է հոգեորականութեան կրօնական կրթութեան (աստուածաբանական զարգացման մասին բնականապէս պէտք է լռել) նա գտնուում է նոյն ստորատիճանի վերայ, ինչ որ կուպական, ասորի յակոբիկների և ասորա—նեստորական հոգեորականութիւնը՝ գուցէ և աւելի ստոր, և որտեղից պէտք է դար կրթութիւնը։ «Եթէ մի հարեշ կամենում է հոգեոր կոչման նուիրուել, այդ լինում է շատ մատաղ երիտասարդութեան ժամանակ, նա ուղարկւում է եկեղեցական լեզուի ընթերցումը և մի շարք խօսքեր գեղց լեզուով (գեղց է ասուում լեթովլական եկեղեցական բարբառը)։ Դաւթի սաղմոսներ, հարեշական երգի և թափորի գաղտնիքներ և փոքրիկ մի տուրք վճարելով արունային, որը միայն իրաւունք ունի, ձեռնագրուում է։ Այսպէս է պատմում Հէօգլինը և ճիշդ են նրա պատմածի եական կէտերը, Սարկաւագից պահանջում են ոչ աւելի քան նա կարող կարողանայ։ Քահանայ ձեռնադրուում են աւելի ծեր հասակում։ Քչերն են ձեռնադրուում զեռ չամուսնացած, որովհետեւ թէպէտ քահանան կարող է ամուսնական կեանք վարել, բայց հարեշստանում ևս ինչպէս միւս արեւելեան եկեղեցիներում, նա չէ կարող ձեռնադրուելուց յետոյ ամուսնանալ։ Քահանայից ևս հազիւ թէ աւելի է պահանջուում քան սարկաւագից։ Միայն անհրաժեշտ է, որ «հաւատոյ հանգանակը

անդիր իմանայ, որը՝ կուպերի, յակոբիկների, ինչպէս և օրթոդոքս եկեղեցիներում գործածական այսպէս կոչուած «նիկիականն» է, որովհետեւ պաշտամունքի գրքերում յաճախ հանգանակը գրած չկայ։ Այս շնչին կրթութիւնը բաւական է քահանային իւր պարտականութիւնները կատարելու համար։ Քարող ինչ է չգիտեն, ժողովրդական զրպրոց և կրթութիւն նոյնպէս անձանթ են։ Մի քանի գիտնական գորոցներ կան, բայց նոցա մատակարարած կրթութեան չափը մեր ժողովրդական զրպրոցներից էլ ցած է։ Բաւական է ասել որ տպագիր գրքեր անձանթ են նոցա մէջ, հոգեորականութեան զգեստը մեծ մասամբ դեղին է։ Այս գեղին գոյնը ժամանակի ընթացքում փոխուում է մի տեսակ կեղտոտ թխագոյնի։ Բայց այդ ամենէն վնաս չունի, որովհետեւ հարեշ հոգեորականութիւնը, ինչպէս շատերը հին եգիպտոսի ս. կրօնաւորներից, շատ աստուածահաճոյ բան են համարում, ջուրն իրր մաքրութեան միջոց որքան կարելի է քիչ գործածել»:

Կրօնաւորների վիճակը շատ տարբեր չէ դարանից։ Ուշիս պատմում է մի վանականի մասին, որի խնդիրքը լսելով, վերադարձին իր մօտ ծառայ է ընդունել՝ նրան այս ձևով Երուսաղէմ հասցնելու համար, ինչպէս ինքն է ասում՝ դիտմամբ մանրամասն է նկարագրում նա այս կրօնաւորի պատկերը, որ ըստ ինքեան «խիստ բարի մաքրարարոյ և անմեղ մարդ էր»։ որովհետեւ հարեշական կրօնաւորներն այնքան նման են իրար, որ այս մէկը բոլորի համար տիպար կարող է համարուել, «նա կրում էր մի կաշեայ» շատ տարիներից ի վեր չփոխուած և չլուացուած շապիկ, անձրևից և ցրտից նրան պաշտպանում էր իր կաշեայ թիկնոցը, (զգեստի այս կտորները այժմ գտնուում են Բերլինի ազգագրական թանգարանում)։ գլխին դնում էր մի գեղին գլխարկ, մի վարդարան, մի փայտեայ խաչ, մի յարգեայ հովանոց, մի սովորաբար իբրեւ տեգ գործագրուող գրակալ, վերջապէս իւր գօտուց կանսիկի թելով կախած Դաւթի սաղմոսների մի գիրքը կաղմում էին նրա ամբողջ հանդերձանքը, նա վարտիք չունէր, Իմ ընթերիւնի մէկին նա երկու կաշեայ տուրակներ բարձեց՝ մէկի մէջ գրքեր, որ ուզում էր ծախել, իսկ միւսի մէջ ժողոված կերակրի պաշարեղէններ։ Քանի նա կրօնաւոր էր դարձել, չէր լուացուել՝ իբրեւ բարեպաշտութեան արտայայտութիւն, և որովհետեւ պահօց օրեր էին, շնայելով որ ծանապարհորդութիւնը շատ յոգնեցուցիչ էր, նա այնուամենայնիւ ձեռք չտրուաւ ամեն տեսակ մեղէն կերակուրներին և ոչ իսկ հաւկիթ ու ձուկ կերաւ, Հէնց որ մենք իջեանում էինք՝ նա շինում էր իմ վրանին մօտ մի փոքրիկ եղեգ-

նեայ հիւղ և կարգում իւր կանգնեցրած գրակալի առաջ ընդայն ձայնով տարիներէ ի վեր նոյն սաղմոսը, օրական գրեթէ յիսուն անգամ որովհետեւ նա ուխտ էր արել այս սաղմոսը՝ չեմ յիշում որը շատ հազարաւոր անգամներ կարգալ, Հարեշներին նորա ներկայութիւնը հաճելի էր, որովհետեւ կարող էին այդպիսով բարի կրօնաւորից թողութիւն ստանալ, եթէ օրինակ շարաթ օրը մօրթած եղի մնից ուտէին, կամ պահք չպահէին, Զրի և առանց ապաշխարանք նշանակելու նա թողութիւն էր շնորհում. դէպի Երուսաղէմ արած ճանապարհորդութիւնը ինձ համար բաւականացուցիչ վարձ է, ասում էր նա, Մի անգամ միայն նա բացառութիւն արաւ. մի հարեշ ծառայ, որ նրան խոստովանել էր, թէ գիշերը զաշտամկների և մկների մասին երազ էր տեսել՝ պէտք է շատ ու շատ անգամ մի աղօթք կրկնէր:

Դժուար թէ բոլոր կրօնաւորները սրա պէս կրթուած լինին, որ գոնէ կեղեցական բարբառին լաւ տեղեակ էր, Շատերը վեղար առնում են միայն խոր ծերութեան ժամանակ՝ վանքերում կենքի փոթորկներից հանգստանալու համար, նոյն իսկ իշխաններ, աստիճանաւորներ և քաղաքական ոճրագործներ կարելի է գտնել նոցա մէջ, նոցա վանքերը սակայն մեր տեսածների պէս չեն, այլ աւելի նման են այն ճգնարաններին, որ Ղ. դարում վերին Եգիպտոսի մէջ հիմնեց կրօնաւորութեան նախահայր ս. Անտոնիոսը, Ոչ կրօնաւորները, ոչ կոյսերը երբէք միասին չեն ապրում մեծ շինութիւնների մէջ, այլ իւրաքանչիւրը մի փոքրիկ խիւկում, Ռօլֆս այսպէս տեսաւ Ուօլտերա (Պոնդարի և Ազուայի մէջ) երկրում՝ հազարի չափ կրօնաւորներ 17 համայնքների կամ վանքերի բաժանուած, իսկ մի 18-րդ տղամարդկանց համար անմատչելի վանքում 24 կոյսեր, կրօնաւորները ապրում են հողի արդիւնքով, մուրացկանութեամբ, իրենց ազգականների շնորհիւ, կամ իրենց սեփական կարողութեամբ:

Ինչպէս որ վերոյիշեալ երկրի կրօնաւորները Ռօլֆսի այդտեղից անցնելու ժամանակ մի պատգամաւորութիւն ուղարկեցին նորա դիմաց՝ այսպէս էլ կոյսերի մայրապետը ուղեկցութեամբ 6 կոյսերի եկաւ ճանապարհորդի մօտ, նրան մի տոպրակ կոճապղպեղ ընծայելու և նրանից փոխարէնը ստանալու համար, «կոյսերի զգեստը բաղկացած էր մի կոշտ թխագոյն կտաւէ շապիկից, դորա վերայ նոյն նիւթից մի դեղին վերարկու, գլխի վերայ մի դեղին գլխարկ՝ արքայուհունը շորերով հաստ փաթաթած, այնպէս որ մի մեծ ապարօշ էր դառնում, Բացի դրանից բոլորն ունէին վարդաբան և մի բարեպաշ-

տութեան գաւաղան, որի վերայ արժանաւորապէս յենուել էին մինչև իմ նոցա նստելու հրաւիրելս, Մայրապետն ինձ հաղորդեց, որ ինքը շատ լաւ ընտանիքից է սերում և արդէն վաղուց ի վեր պաշտօնի և պատուի մէջ է, կոյսերից և ոչ մէկը երիտասարդ չէր, և ոչ գեղեցիկ կամ գոնէ գեղեցիկ եղած, Ինչպէս կրօնաւորները, նոյնպէս և նոքա պէտք է զգաստութեան ուխտ անէին, բայց նոքա սովորաբար երբէք երիտասարդ վանք չեն մտնում. . . . Թէպէտեւ կրօնաւորների բնակավայրին մերձ էին բնակուում, բայց ինչպէս հաւատացնում էր մայրապետը, նոցա երբէք չէին տեսնում, Իմ հարցին, թէ ինչով են ապրում, նա պատասխանեց. Պարտիզպանութեամբ, զանազան զգեստներ պատրաստելով և ասեղնագործութեամբ, որ մենք ծախում ենք, սակայն գլխաւորապէս յարեց նա, աղօթում և կարգում ենք, որովհետեւ միայն նրանով Աստծուն մօտենալ կարող ենք, Ինչպէս առաջ կրօնաւորները՝ նոյնպէս և կոյսերը ստացան մի մի բաժակ օղի, իսկ մայրապետը՝ բացի դրանից նուէր դրամով, որից նա այնքան գոհ եղաւ, մինչ առաւօտը, երբ ես ցանկանում էի իջեանտեղին թողնել, մի անգամ ևս ձիավարելով եկաւ, ինձ իւր կտրած մի վարտիքը ծախելու համար, Այդ արդէն սրտաշարժ էր, Բայց որովհետեւ այդ զգեստը մաքրութեան կողմից շատ կասկածելի տեսք ունէր և իմ ազգագրական ժողովածուների մէջ կար արդէն մի այդպիսին, խնդրեցի մայրապետին, որ այդ իրեն մօտ պահէ, բայց ինչ որ արժէր՝ գինը տուի, նկատելով, թէ ես չպէտք է ցանկանամ, որ նորա նման բարձրաստիճան և աստուածապաշտ մի կին իզուր ինձ համար այգքան ճանապարհ կտրէր, Այս կոյսերի համար արդեւարան ուրեմն չկայ, նոցա ծերութիւնը պաշտպան է նոցա առաքինութեան:

Աշխարհականների քրիստոնէութեան մասին քիչ բան կայ ասելու, Բացի այն, որ նա ժամբեցութեան միջոցին պահանջուած համբերութեամբ է արտայայտուում՝ նրա գլխաւոր յայտարար նշանը պահեցողութիւնն է, Պահոց օրերը Հաբեշտանում ինչպէս արեւելքի բոլոր եկեղեցիներում, չափազանց շատ են, Հաբեշտանում տարեկան 200 օր պահք է, Ով բարեպաշտ է ուզում լինել, մի քանի աղօթքներ էլ է սովորում, բայց ինձ համար մութն է՝ արեւօք սովորած աղօթքները, ինչպէս կոպտերի մէջ՝ եկեղեցական թէ ժողովրդական լեզուով են խմբագրած, Եկեղեցական գործողութիւններից միայն խոստովանութիւնը կարող էր կրթական ազգեցութիւն ունենալ, Բայց ինչպէս երևում է այստեղ էլ աւելի հարց է լինում պաշտամունքի, քան բարոյականութեան վերաբերեալ զանազանութիւնների

մասին, Ամուսնութիւնը իբրև եկեղեցական արարողութիւն չէ կարող կրթական ազդեցութիւն ունենալ, որովհետև ինչպէս ասում է Գուսնէրտոնը, հաշիւ ճանաչում են ամուսնութիւն, եթէ ստոյգ է հեղինակի պատմածը, որ եկեղեցին միայն տղամարդիկ և եկեղեցում պսակած կանայք կարող են յաճախել և որ չգտական կանայք հաղորդութիւն չեն առնում, այն ժամանակ մեր առաջ բացում են եկեղեցական անկրթութեան սարսափելի պատկերներ—մինչդեռ այստեղ 12,000-ից աւելի հոգևորականներ կան:

Չարմանալի չէ ուրեմն, որ այս քրիստոնեաների ինչպէս նաև ուրիշ արևելեան եկեղեցիների մէջ, հռոմէական և աւետարանական միսիոնարները արգաւանդ հող գտած են համարում, Սակայն քանի Հարեշտանը ազգային պետութիւն կ'մնայ, Հռոմը դժուար թէ կարողանայ յաջողութիւն ձեռք բերել. նեղուսը երկիւղ է կրում հետաւոր պապի ազդեցութիւնից, Արգեօք աւետարանական առաքելութիւնը աւելի յաջողութիւն ունի, Անգլիացիք և Բազիլի բանւոր—միսիոնարները 1830-ից մինչև 1868-ի անգլիական պատերազմներում յաջողութիւն չունեցան, 1868-ին շուկական միսիոնարները Մասսաւայից մեծ եռանդով սկսեցին գործել, Թէ արգեօք խաղացիք Մասսաւան գրաւելով նոցա դուրս են քշել, եւ չգիտեմ, Բուն հարեշտանի մէջ նոքա չեն կարողացել գործել. հարեշների թագաւորները հպարտ գլտակցութիւն ունենալով իրենց քրիստոնէութեան մասին, իւրաքանչիւր իսկական առաքելութիւն այնտեղ իրենց ազգի համար իբրև նախափնէք պէտք է ընդունէին և պատժէին:

Շվեդական առաքելութեան մի պատգամաւոր 1879-ին ընծաներով գնաց Նեգուսի մօտ և ստիպուեցաւ այնպէս ձևանալ, որ իբր թէ չէ եկել միսիոնարական դիտաւորութեամբ հարեշ քրիստոնեաների համար աշխատելու, այլ եկել է ֆալաշներին ի նկատի ունենալով, «Արեմն Շվեդիայում և Եւրոպայում հրէաներ չկան, հարցրեց Նեգուսը, — օ այդ սակայն այնտեղ շատ հոգևորականներ կան նոցա դարձնելու համար. — Բայց ի՞նչպէս էք իսկապէս եկել այստեղ, ի՞նչ երկիրներ էք անցել. — Մենք եկանք առաջ Եւրոպայի յետոյ Եգիպտոսի միջով. — Եգիպտացիք ի՞նչ կրօնի են. — Մահմեդական են. — Աւրեմն աւելի լաւ էր այնտեղ մնայիք, Եգիպտացիներին և թուրքերին դարձնելու համար, փոխանակ Հարեշտան գալու, ուր մենք բոլորս քրիստոնեայ ենք»:

Իրաւունք ունի արգեօք Նեգուսը, քրիստոնեական առաքելութիւնը Հարեշտանում ոչ միայն անյաջող այլև ապօրինի է, Աթլֆս դրական պատաս-

խան է տալիս այս հարցին. «Հարեշները դեռ քրիստոնեայ են, իսկ թէ նոցա հաւատը՝ միաբնակութիւնը, ճիշտ է թէ սխալ, ով կհամարձակուի վերջնական որոշում տալ, Հասկացող մարդն ի հարկ է ոչ, Եւրոպայում սկսել են արգեօք վճռել, թէ ո՞ր կրօնն է ճիշդ, կաթոլիկները չեն նշովում արգեօք բողոքականներին, Հարցրէք կրօնի ղեկավարներին՝ հոգևորականներին, և փրկութիւնը նոցա իւրաքանչիւրի սեփական եկեղեցում կգտնէք, Բայց եթէ օրինակ մարդ մտածէ, որ լուսաւորեալ ազգերի մեծամասնութիւնը՝ Գերմանացիք, Անգլիացիք, Հոլանդացիք, Ռուսները, Իտալեանացիք, Հոլանդացիք բողոքական են և որ սակայն բողոքական կրօնը դատապարտուում է այն եկեղեցու զլխից, որ իւր իշխանութեան քաղաքալրութեան շատ աւելի ստոր աստիճանների վերայ գտնուող ժողովուրդներն ենք, ունի պէտք է թոյլատրուի կասկածել այդպիսի մարդկանց վճիռների հաստատութեան վերայ, թէ և նոքա իրենց բացառապէս Աստուծոց ներշնչուած են համարում, Պարզ է, որ ամեն ինչ տիրապետելու հաճոյքի շուրջն է պտտում, եթէ դու այնպէս հաւատաս ինչպէս ես, ասում է կաթոլիկը, դու երջանիկ կլինես, եթէ դու այնպէս հաւատաս, ինչպէս ես քեզ Ս. Գիրքը կմկնեմ՝ դու երկնքի արքայութիւնը կժառանգես, ասում է բողոքականը, Արն է ուրեմն ճիշդը. ոչ դք այդ չգիտե և հասկացող մարդն այսօր ոչ ժամանակ ունի և ոչ իսկ պարտք դորա մասին մտածելու»:

Այդպիսի պատճառաւորութիւն Հարեշտանի քրիստոնեական առաքելութեան դէմ չէ կարող այն մարդկանց վերայ ազդել, որոնք մի փոքր աւելի ժամանակ և պարտականութիւն ունին պատմութեան և մարդկային սրտի առաջ դրած ամենամեծ հարցերի մասին մտածելու, Նոյն իսկ Հարեշտանում քրիստոնեական առաքելութիւնը ապօրինի է, բնաբանը հերքել կարելի է հիմնաւոր փաստերով, Ինչպէս որ Ղպտինների, ասորի—Յակոբիկների և Նեստորականների մէջ, Նոյնպէս և Հարեշըստանում աւետարանական առաքելութիւնը բնական է և շատ իրաւացի, Այստեղի քրիստոնէութիւնը համեմատած այն քրիստոնէութեան հետ, որ իսկապէս պէտք է լինի՝ միայն անուամբ է նման, Հարց է թէ արգեօք աւետարանական առաքելութիւն վարել այստեղ թելադրում է նոյնպէս խոհեմութիւնը որ Աստուծոյ հաւատարմութեամբ սպասաւոր լինելու համար ոչ պակաս կարևոր պահանջ է Ղպտինների և ասորի քրիստոնեաների մէջ առաքելութիւնը բարի և արդարացի է, այս ժողովուրդները իրենց ազգային ամբողջութիւնը կորցրել են, Ցարեր է խնդիրը Հայաստանում և

Հաբեշտանում Այստեղ ազգային վերածնութիւն գեռ հնարաւոր է: Աւետարանական առաքելութիւնն այդպիսի ազգային վերածնութիւն չպէտք է խափանէ: Եթէ նոյն իսկ ինքը յաջողութիւն ունենայ, որովհետեւ այդպիսով բաժանումներ է ձգում ժողովրդի մէջ: Նրա խանգարիչ ազդեցութիւնը պակաս չէ նաեւ այն ժամանակ, երբ աշխատանքն ապարդիւն է մնում: որովհետեւ ազգային քրիստոնէութեան հետ կապուած բոլոր թերութիւնները, նոր առաքելութեան դէմ եղած հակառակութեան շնորհիւ՝ դառնում են իրրեւ նուիրական և պահպանութեան արժանի: Ի՞մ կարծիքով քրիստոնէական եղբայրսիրութիւնից բխած մի արդիւնաւոր ծառայութիւն կարելի է մատուցանել այս «քրիստոնէայ» ժողովուրդներին նրանով միայն, որ կարողանային ազգային կրթութեան պահանջների համաձայն նպաստել ժողովրդի բարձրացման և նախապաշարումների ոչնչացնելուն: Իսկ ինչ վերաբերում է Հայերին, եթէ թուրքերը թող տան որ այդ ժողովուրդն ապրի այդպիսի ազգային վերածնութիւն այլ ևս հեռու հորիզոնի վերայ բարձրացող մի կարելիութիւն չէ միայն: Ամբողջ ժողովրդի կրթութեան աստիճանն այստեղ շատ աւելի բարձր է կանգնած: քան Հարեշներին: մինչև անգամ այստեղ գործում են իսկապէս դարգացած աստուածաբաններ, և զոցա հաշուում նաև այնպիսիները, որոնց գերմանացի պրոֆեսորներ սիրով յիշում են՝ իբրև իրենց ընդունակ և խիստ յարգելի աշակերտների:

Աստի չպէտք է Հայերին քրիստոնէայ հաբեշների հետ մի աստիճանի վերայ դնել: Միմեանց կողքին դնելն այն միտքն ունի, թէ ինչ որ Հայերի համար յուսալ իրաւացի է, այդ հաբեշների համար ևս բոլորովին անկարելի փափագ չպէտք է համարուի:

Այդպիսի ցանկութեանց կատարումն ի հարկէ խիստ կրթութեամբնայ, եթէ Եւրոպայի քրիստոնէայ ազգերը շարունակեն այդ ժողովուրդների վերայ բացառապէս իբրև կուռեականներ և իրենց իշխանութիւնը արևելքում ընդարձակելու միջոցների վերայ նայել: Գանգատուում են այն բարբարոսական խտրութեան դէմ, որով այդ քրիստոնէաները պաշտպանում են իրենց ազգային սեպհականութիւնը, իրենց ազգի յոյսերը: Երգարև դա առանց հիմունքի չէ: Բայց եթէ մեկը մտածէ, թէ ինչքան նոքա քիչ և Եւրոպայի ժողովուրդները շատ են ստացել (համ: Առկ-ԺԲ 48), այն ժամանակ թող չէ կարելի տալ մտածելու, որ նոցա աչքում գերան կայ, իսկ Եւրոպայի քրիստոնէայ ժողովուրդների աչքում չիւզ:

ԿՐԿԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
ԵՒ

ՄՐՄԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐԸ:

Ինչպէս անցեալ անգամ յայտնեցինք, այս նիւթին վերաբերեալ մեր յօդուածն Արարատի ապրիլ հում արժանացել է շատ ընդարձակ պատասխանի, որ ներկայացնում է 20 երեսից բաղկացած մի առանձին տետր: Միութարեանց դատի պաշտպանըն այս անգամ Հացոնու փոխարէն Շիրակացին է. ասել է թէ վննետիկի միարանութիւնը իւր մատնան զոնդն է տապարէղ հրաւիրել՝ անշուշտ այդ դատին շատ մեծ նշանակութիւն տալուց: Դժբաղդաբար մեր ընթերցողների մեծազոյն մասը միջոց չունի երևի Բազմալէպն և իւր այդ վերջին հրատարակութիւնը կարդալու: արժէր կարդալ՝ թէկուզ մեծահոգակ միարանութեան արդի վիճակի ու բռնած ուղղութեան մասին մի դադափար կազմելու համար: Բայց զոնէ նոքա, որոնք կարդում են և որոնց փոքր ի շատէ ծանօթ է Շիրակացին իւր նըմանը չտեսնուած գրուածքներով կհասկանան, թէ ինչ ասել է նորա հետ վէճի բռնուել՝ վիճել մի մարդու հետ, որ տրամաբանութեան և բարոյադիտութեան տարբեր կանոններով է առաջնորդուում, քան սովորական մահկանացուներս: որի զրիչը ոչ մի տեղ կանգ չի առնում, որ ամենաճանր անձնական վիրաւորանքներ է հասցնում՝ առանց գուցէ զգալու իւր արածը, ամբիոնի վրայից է խօսում ձեզ հետ՝ պատմութեան դասեր տալով իբրև մի հասարակ դպրոցականի, թէպէտև մինչև այսօր այն ամենահասարակ բանը չի իմացել օրինակ, որ հաբեշները միարնակ են և ոչ նեւտորական:

Նախորդ յօդուածում մենք տշխատել էինք որքան կարելի է մեղմ լեզու դործ դնել խոյս տալ անտեղի վիճաբանութիւնից և մեր առաջ դրած խնդիրը միայն պարզաբանելու զուտ պատմական տեսակետից՝ անուշադիր թողնելով հակառակորդի անվայել յարձակութեան ոճը և